ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-19/22» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Երևան **«15» Օգոստոսի 2019թ.**

ժամը 11 ^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գ.Շահնազարյան «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Յուրիկ Բունյաթյան «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիայի կայուն օրգանական աղտոտիչների բաժնի վարիչ

Արտակ Խաչատրյան «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի թափոնների հաշվառման, դասակարգման և տեխնոլոգիաների ուսումնասիրության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Շ.Ավագյան «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական բաժնի գնումների մասնագետ

1. « ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-19/22» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման մասին. (Գ.Շահնազարյան)

1.1. Հաշվի առնելով «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դյուրակիր համակարգիչ ձեռք բերելու համար հայտարարված «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-19/22» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկներն ու մասնակիցների կողմից ներկայացրած հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունն այն մասին,որ նշված ծածկագրով մրցույթի մասնակից «Նոութբուք սթոր» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունի:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Հաղթող ճանաչել «Նոութբուք սթոր» ՍՊԸ-ին և ընկերությանը ներկայացնել դյուրակիր համակարգչի մատակարարման պայմանագրի կնքման առաջարկ:

2.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը,անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:

3. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ.Շահնազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Յ.Բունյաթյան

_____ Ա.Խաչատրյան

Քարտուղար՝ _____ Շ.Ավագյան